

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ  
ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

«Մշակութաբանություն» մասնագիտացման  
բակալավրիատի

ԾՐԱԳԻՐ

ՌՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ  
ՀԻՆ ԴԱՐԵՐԻՑ ՄԻՆՉ ՄԵՐ ՕՐԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

«Մշակութաբանություն» մասնագիտացման  
բակալավրիատի

ԾՐԱԳԻՐ

ՌՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ  
ՀԻՆ ԴԱՐԵՐԻՑ ՄԻՆՉ ՄԵՐ ՕՐԵՐ

Կազմեց՝ արվ. թեկն.  
ասիստենտ Ս.Ա. Նալբանդյանը

Երևան  
Մեկնարկ 2016

ՀՏԴ- 008(470+571)(091):391/398(=161.1)

ԳՄԴ 63.3(212)-7+63.5(212)

Ռ 950

*Հրատարակության է երաշխավորել*

*ԵՊՀ պատմության ֆակուլտետի*

*Գիտական խորհուրդը*

**Կազմեց՝** արվ. թեկն., ասիստենտ Ս.Ա. Նալբանդյանը

Ռուսական մշակույթը հին դարերից մինչ մեր օրեր / Կազմեց՝  
Ռ 950 արվ. թեկն., ասիստենտ Ս.Ա. Նալբանդյանը – Եր.: Մեկնարկ  
2016. – 28 էջ:

Բակալավրիատում դասավանդվող Ռուսական մշակույթը հին դարերից մինչ մեր օրեր դասընթացն ներկայացնում է ռուսական մշակույթի զարգացման հիմնական փուլերը՝ նախաքրիստոնեական փուլից մինչ մեր օրեր: Այն պատկերացում է տալիս ռուսական արվեստի, կենցաղի, ծեսերի և ավանդույթների մասին: Ծրագիրում կիրառված են ժամանակակից հումանիտար գիտություններում տարածված մեթոդները:

ՀՏԴ- 008(470+571)(091):391/398(=161.1)

ԳՄԴ 63.3(212)-7+63.5(212)

1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ,  
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
և ԹԵՄԱՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

**ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ**

Ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ ռուսական մշակույթի պատմության վերաբերյալ հեթանոսությունից մինչև 20-րդ դարի վերջ՝ պատմամշակութային, արվեստաբանական վերլուծության և մշակութային մարդաբանության մեթոդների կիրառմամբ:

**ԴԱՍԸՆԹԱՑԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ**

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա հետևյալ ունակությունները

*Գիտելիք և իմացություն հետևյալի մասին.*

- ռուսական մշակույթի պատմության հիմնական հասկացությունների ու կատեգորիաների բովանդակությունը
- ռուսական մշակույթի ժամանակագրությունը

### *Ունակ կլինի.*

- տարբերակել ուսումնասիրվող դարաշրջանի հետ կապված հիմնական մշակութային գործընթացները և կատարել նրանց գիտական մեկնաբանությունը
- կողմնորոշվել Ռուսաստանի մշակույթի պատմությանը վերաբերող հիմնական ժամանակակից գիտական տեսությունների միջև
- հասկանալ և մեկնաբանել ռուսական մշակույթի գրավոր և տեսողական (վիզուալ) աղբյուրները
- կիրառել արդի մեթոդաբանությունը մշակութային երևույթների վերլուծության համար

### *Կտիրապետի.*

- առարկայի եզրութաբանական ապարատին
- ինքնուրույն գիտական հետազոտություն կատարելու հմտությանը
- մշակութապատմական գործընթացի ակադեմիական նկարագրության հմտություններին
- կիրառել ձեռք բերված գիտելիքները գործնականում:

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ

Դասընթացը ենթադրում է 32 ժամ, որոնցից 24-ը դասախոսություններ են, 4-ը՝ սեմինար-քննարկումներ, 4-ը՝ եզրափակիչ հարցումներ:

## ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱ

Դասընթացի դասավանդան ընթացքը կազմակերպվում է հետևյալ կերպ.

- դասախոսություններ, որոնք բաղկացած են դասախոսի կողմից տեսական և նկարագրական նյութի քննական ներկայացումից՝ ներառելով յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ կազմած Power Point լսարանային ցուցադրություններ, ինչպես նաև հարցերից ու պատասխաններից /հարցերը տրված են սույն ծրագրի վերջում/
- սեմինարներ, որոնց ընթացքում ուսանողները ներկայացնում են կուրսի համար նախատեսված թեմաներին վերաբերող

պարտադիր և լրացուցիչ գրականությունը և քննարկում այն՝  
դասախոսի ղեկավարմամբ

- գիտելիքի ստուգում:

## ՔՆՆՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

- գրավոր հարցում՝ միջանկյալ քննությունների տեսքով:  
Հարցումը բաղկացած է երեք մասից. ա) ընդհանուր գիտելիքը  
ստուգող թեստ; բ) նշված պատմական փուլում ընկած որևէ  
դարաշրջանի մանրամասն վերլուծություն; գ) տվյալ  
պատմական փուլը ուսումնասիրող գիտական հոդվածի կամ  
գրքի մեկ գլխի քննություն
- բանավոր հարցում՝ սեմինարների ընթացքում նյութի  
պարտադիր ներկայացման միջոցով
- բանավոր հարցում՝ վերջնական բանավոր քննության  
տեսքով:

## 2. ԹԵՄԱՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

### Թեմա 1. Ռուսական մշակույթի ակունքները

- Սլավոնական ցեղերի ձևավորումն ու տարածման աշխարհագրությունը:
- Արևելյան սլավոնների կենցաղն ու բարքերը:
- Հին սլավոնների հեթանոսական կրոնը: Կրոնական համակարգ և հավատամքներ:
- Ռուս էթնոսի անջատումը արևելյան սլավոններից :
- Ռուսական մշակույթի ծագումը և առանձնահատկությունները:

### Թեմա 2. Քրիստոնեությունը՝ Ռուսիայի պետական կրոն

- Քրիստոնեության ընդունման նախադրյալները և նրա հռչակումը որպես պետական կրոն:
- Վլադիմիր իշխանի ընտրությունը հոգուտ ուղղափառության: Կաթոլիկության և ուղղափառության պատմահամեմատական (համադրական) վերլուծությունը:



- Բյուզանդիոնի մշակութային և քաղաքական ազդեցությունը Ռուսիայի վրա քրիստոնեության հռչակումից հետո:
- Եկեղեցիները՝ Հին Ռուսիայի մշակութային կենտրոններ:

## **Թեմա 2. Սլավոնական գրերի գյուտը**

- Քրիստոնեության ընդունումը՝ սլավոնական գրերի ստեղծմանը նպաստող հանգամանք:
- Սլավոնական այբուբենի ստեղծումն ու գրագիտության տարածումը սլավոնական ազգերի մեջ: Կիրիլի և Մեթոդիոսի գործունեությունը: Սլավոնական այբուբենի ստեղծման պատմությունը:
- Սլավոնական երկու այբուբենների (գլագոլիկ և կիրիլիկ) պատմաձևնդաբանական համեմատությունը:
- Ուղղափառ մշակույթի տարածումը Հին Ռուսիայում: Մատենագրության և թարգմանչական գործի անհրաժեշտությունը՝ պայմանավորված քրիստոնեության ընդունմամբ:

### Թեմա 3. Կիւսկան Ռուսիայի մշակույթը

- Կիւսկան Ռուսիայի մշակույթի ժամանակագրութիւնը և գլխավոր առանձնահատկութիւնները:
- Գրերի տարածումը և կրթութիւնը Կիւսկան Ռուսիայում:
- Եկեղեցաշինութիւն և քաղաքաշինութիւն: Եկեղեցիների կառուցումը՝ քաղաքաշինության և քաղաքային մշակույթի ձևավորման խթան: Եկեղեցիները՝ Կիւսկան Ռուսիայի մշակույթի կենտրոններ:
- Կիւսկան Ռուսիայի արվեստը: Ռուսական մշակույթի սրբանկարչութիւնը:
- Բյուզանդական կանոնը և ռուսական ոճը; աշխարհի ոճավորված ընկալումը ըստ արվեստի պատմաբան Գ.Կ. Վագների: Ոսկու կիրառումը բյուզանդական արվեստում (կերպարվեստ, ճարտարապետութիւն), նրա գեղագիտական և աստվածաբանական գործառնութիւնները ըստ Ս.Ս. Ավերինցևի:
- Գրականութեան վերելքը Կիւսկան Ռուսիայում:

#### Թեմա 4. Ռուսական մշակույթը 13-17-րդ դարերում

- Մոսկվան՝ Ռուսիայի քաղաքական և մշակութային կենտրոն:
- Մոսկովյան Ռուսիայի մշակույթը:
- Իվան Ահեղի մշակութային քաղաքականությունը:
- Ռուս գրատպության պատմությունը. Իվան Ֆեոդորով:  
Առաջին ռուսերեն տպագիր գիրքը՝ «Առաքյալը» (Апостол),  
1564թ.:
- Հին Ռուսիայի գրականությունը, ճարտարապետությունը,  
սրբանկարչությունն ու որմնանկարչությունը:
- Հին Ռուսիայի գրավոր և բանավոր ավանդույթները: «Ասք  
Իգորի գնդի մասին»: Ռուսական պատմագրությունը:
- Մոսկովյան Ռուսիայի ճարտարապետությունը,  
սրբանկարչությունն ու որմնանկարչությունը. Անդրեյ  
Ռուբլյով, Ֆեոֆան Գրեկ:

## Թեմա 5. 18-րդ դարի ռուսական մշակույթը

- Մշակույթի զարգացման տեմպերի արագացումը:
- Նախորդ դարերի ընթացքում կուտակված գիտելիքի գիտականացումը:
- 18-րդ դարի մշակույթի երկու գլխավոր գծերը՝ աշխարհականացումը (секуляризация) և արևմտականացումը, ինչպես նաև ժողովրդական և ազնվական մշակույթների տարանջատումը:
- Բանական-խոհական աշխարհայացքը և լուսավորչական փիլիսոփայությունը 18-րդ դարի մշակույթի համատեքստում:
- Աշխարհիկ դպրոցի ստեղծումը:
- Գիտության և տեխնիկայի զարգացումը:
- Արվեստները 18-րդ դարում. 18-րդ դարի արվեստի հիմնական ուղղությունները՝ ռուսական կլասիցիզմ, ամպիր, բարոկկո:
- Պետրոս Առաջինի մշակութային քաղաքականությունն ու ռուսական կենցաղի և մշակույթի եվրոպականացումը:
- Ռուսական մշակույթը Եկատերինա Երկրորդի օրոք: Գրականության, արվեստների և գիտության ծաղկման նախապայմանները:

## Թեմա 6. Ռուսական մշակույթը 19-րդ դարի արաջին կեսին

- Ռուսական մշակույթի Ոսկե դարը:
- Պետական կրթական համակարգի ստեղծումը՝ տարրական, միջին և բարձրագույն կրթության խթանումը:
- Գիտությունը 19-րդ դարի առաջին կեսին: Հումանիտար և բնագիտական գիտությունների տարանջատումը:
- Ստորումներ Ռուսաստանի պատմության վերաբերյալ: Ռուսական մտքի զարգացման հիմնական ուղղությունները՝ արևմտամետներ և սլավոնաֆիլներ: Ռուսական մտավորականության ձևավորումը:
- Հիմնական ուղղությունները և թեմաները գրականության մեջ. սենտիմենտալիզմ, ռոմանտիզմ և ռեալիզմ:
- Ռուս գրականությունը 19-րդ դարի առաջին կեսին. Ա.Ս. Պուշկին, Մ.Յու. Լերմոնտով, Ն.Վ. Գոգոլ:
- Կերպարվեստ, ճարտարապետություն և քանդակագործություն: Թատերական արվեստ. դրամատիկական և երաժշտական թատրոններ:

## **Թեմա 7. Ռուսական մշակույթը 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին**

- 19-րդ դարի ռուսական մշակույթը համաեվրոպական կոնտեքստում՝ գործարանների ընդլայնումը և արտադրության մեքենայացումն ու դրանց արտացոլումը ռուսական արվեստում և գրականությունում: Գնացքը կյանքի ռիթմի արագացման և հասրակության ապամարդկայնացման նշան ռուս գրողների երկերում (Լ.Ն. Տոլստոյի «Աննա Կարենինա» և Ֆ.Մ. Դոստոևսկու «Ապուշը» վեպերի հիման վրա):
- Նյութական մշակույթը 19-րդ դարի երկրորդ կեսին: Անհատի խնդիրը և անձի օտարմունը 19-րդ դարի երկրորդ կեսի ռուսական արվեստում և գրականության մեջ՝ նյութական արժեքների ծավալի ընդլայնման ֆոնին:
- Պոզիտիվիստական փիլիսոփայությունն ու ռեալիստական մշակույթը: Ֆիզիոլոգիական ակնարկը 19-րդ դարի ռուսական գրականությունում:
- Քննադատական ռեալիզմը՝ 19-րդ դարի ռուսական մշակույթի հիմնական ուղղություն: Բուրժուազիայի ձևավորումը և նոր դասակարգի քննադատությունը

ռուսական գրականությունում և արվեստում: Խորը ներթափանցում անհատի ներաշխարհը:

- 19-րդ դարի ռուսական կերպարվեստը. Շարժական գեղարվեստական ցուցահանդեսների ընկերություն կամ «պերեդվիժնիկներ»՝ Ի.Ն. Կրամսկոյ, Ի.Ե. Ռեպին, Վ.Ի. Սուրիկով, Ի.Ի. Շիշկին, Կ.Պ. Բրյուլով:
- 19-րդ դարի ռուսական թատրոնը: Փոքր թատրոնի գեղագիտությունը և Ա.Ն. Օստրովսկու դրամատուրգիան:
- 19-րդ դարի ռուսական երաժշտությունը: Ռուսական օպերան և սիմֆոնիկ երաժշտությունը: «Հզոր խմբակ» (Могучая кучка)՝ Մ.Պ. Մուսորգսկի, Ա.Պ. Բորոդին, Ն.Ա. Ռիմսկի-Կորսակով: Պ.Ի. Չայկովսկու արվեստը:
- Կրթական համակարգը 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին:
- Գիտությունների անվանարկման (դիֆֆերենցում) խորացումը 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին:
- 20-րդ դարի սկզբի մշակույթի գլխավոր միտումները: Ռուսական պոեզիայի Արծաթե դարը: Միմվոլիզմը գրականությունում և թատրոնում:
- Ակմեիստների մանիֆեստը. Ա.Ա. Ախմատովա, Ն.

- Տուտուրիզմը 20-րդ դարի առաջին կեսի ռուս գրականությունում՝ Վ.Վ. Մայակովսկի, Վել. Խլեբնիկով, Բ.Լ. Պաստեռնակ:
- Ռուսական կինոյի ծագումն ու զարգացումը. ռեժիսորական արվեստ՝ Ե.Ֆ. Բաուեր, դերասանական արվեստ՝ Վերա Խոլոդնայա:
- Ռուսական ավանգարդի առանձնահատկությունները – կերպարվեստը, քանդակագործությունը և ճարտարապետությունը 20-րդ դարի առաջին կեսին. Կ.Ս. Մալևիչ, Վ.Վ. Կանդինսկի:
- Թատերարվեստ և երաժշտական արվեստ: Մոսկվայի Գեղարվեստական թատրոնը՝ ռեժիսորների թատերաբեմ: Թատրոնի նորարարները՝ Կ.Ս. Ստանիսլավսկի, Վ.Է. Մեյերխոլդ, Ե.Բ. Վախթանգով: Ռուսական բալետի թռիչքը՝ Ռուսական սեզոնները Փարիզում:
- Կրթական համակարգը 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին: Գիտությունների դիֆֆերենցման խորացումը 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին: Ֆունդամենտալ և կիրառական գիտությունների տարանջատումը:



- 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի փիլիսոփայական միտքը. Ն.Ա. Բերդյան:

## **Թեմա 8. Ռուսական մշակույթը 1917թ.-ից մինչ մինչ մեր օրեր**

- 1920-ական թթ. ստեղծագործական միավորումների կազմակերպումը:
- Ցենզուրայի (գրաքննության) հաստատումը խորհրդային մշակույթում:
- Սոցռեալիզմը՝ ԽՍՀՄ-ի պաշտոնական մշակույթ:
- Գրագիտության մակարդակի բարձրացումը և մշակույթի խթանման քաղաքականությունը:
- Պրոպագանդան և խորհրդային մշակույթը:
- 20-րդ դարի ռուսական այլախոհական (դիսիդենտական) և էմիգրանտական մշակույթը:
- Ռուսական մշակույթի զարգացման միտումները արդի փուլում:

### 3. ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ և ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՄԱՐ

#### Հին Ռուսիայի մշակույթ

1. Ինչպիսի՞ն էր սլավոնական ցեղերի կենցաղն ու մշակույթը:
2. Որո՞նք են Ռուսիա անվանման ստուգաբանությունները:
3. Ե՞րբ և ու՞մ կողմից քրիստոնեությունը հռչակվեց Ռուսիայի պետական կրոն: Ինչու՞ որոշում կայացվեց հարել ուղղափառությանը:
4. Որո՞նք են բյուզանդական ուղղափառ մշակույթի հիմնական հատկանիշները: Վերլուծել Ս.Ս. Ավերինցևի «Ոսկին վաղ բյուզանդական խորհրդանիշների համակարգում» հոդվածը:
5. Ե՞րբ և ու՞մ կողմից են ստեղծվել սլավոնական գրերը: Ինչպիսի՞ պատմամշակութային նշանակություն ունեցավ գրերի գյուտը Ռուսիայի համար:
6. Որո՞նք են Կիևյան Ռուսիայի մշակույթի առանձնահատկությունները:
7. Ո՞րն էր եկեղեցիների դերը Կիևյան Ռուսիայում:
8. Որո՞նք էին հին ռուսական արվեստի և գրականության ժանրերը: Տալ կանոնի և ոճի բացատրությունն ըստ Կ.Գ. Վազների:

9. Որո՞նք են Մոսկովյան Ռուսիայի մշակույթի առանձնահատկությունները:
10. Ե՞րբ և ու՞մ կողմից է հիմնվել գրատպությունը Ռուսիայում: Ի՞նչպես էր կոչվում առաջին ռուսերեն տպագիր գիրքը:
11. Կարելի՞ է արդյոք համարել 17-րդ դարի մշակույթը անցումնային: Հիմնավորել պատասխանը:

### **18-րդ դարի մշակույթ**

1. Ո՞րն է 18-րդ դարի ռուսական մշակույթի ամենաընդունված տարաբաժանումը:
2. Ո՞րոնք են 18-րդ դարի ռուսական մշակույթի զարգացման հիմնական միտումները: Բացատրել «секуляризация» հասկացությունը:
3. Որո՞նք էին Պետրոս Առաջինի քայլերը՝ ուղղված ռուսական կենցաղի եվրոպականացմանն ու մշակույթի աշխարհականացմանը:

4. Ի՞նչ ազդեցություն ունեցավ 18-րդ դարում անց կացված կրոնական ռեֆորմը ռուս մշակույթի հետագա զարգացման վրա:
5. Արվեստներն ու գրականությունը Եկատերինա Երկրորդի օրոք:
6. Ի՞նչ առանձնահատկություններ էր կրում 18-րդ դարի կրթական համակարգը:
7. Վերլուծել 18-րդ դարի ռուսական մշակույթում տիրող հիմնական ուղղությունները:
8. Վերլուծել 18-րդ դարի ռուսական արվեստի և գրականության ժանրերը:

### **19-րդ դարի առաջին կեսի մշակույթ**

1. Ինչու՞ է 19-րդ դարի դարի առաջին կեսի ռուս մշակույթը համարվում Ոսկե դար:
2. Որո՞նք են 19-րդ դարի առաջին կեսին ռուս գրականությունում տիրող հիմնական ուղղությունները:
3. Ի՞նչ առանձնահատկություններ էին կրում թատրոնը և երաժշտությունը 19-րդ դարի առաջին կեսին:

4. Ինչպիսի՞ն էին կերպարվեստն ու ճարտարապետությունը 19-րդ դարի առաջին կեսին:

### **19-րդ դարի երկորդ կեսի և 20-րդ դարի առաջին կեսի մշակույթ**

1. Ուրվագծել ռուսական մտավորականության ձևավորման և զարգացման պատմությունը:
2. Ո՞րոնք են էր-րդ դարի ռուս մտավորականների դիրքորոշման երկու ուղղությունները:
3. Ո՞րոնք են 19-րդ դարի երկորդ կեսի մշակույթի հիմնական գծերը:
4. Ի՞նչպիսի դրսևորում է ստացել անձի օտարման խնդիրը 19-րդ դարի երկորդ կեսի ռուս գրականության մեջ:
5. Ո՞վքեր են համարվում քննադատական ռեալիզմի հիմնական ներկայացուցիչները:
6. Ո՞վքեր էին ռուս «պերեդվիժնիկները»:
7. Ո՞վքեր էին «մոգուչայա կուչկայի» ներկայացուցիչները:
8. Ո՞ր արվեստագետների շնորհիվ էր 20-րդ դարի առաջին կեսին Մոսկվան դարձել թատերական արվեստի կենտրոններից մեկը:

9. Որո՞նք են 20-րդ դարի առաջին կեսի ռուսական արվեստի և գրականության հիմնական ուղղությունները:
10. Ի՞նչ մտքեր էին գտեղված սիմվոլիստների մանիֆեստում:
11. Նշել ռուսական ավանգարդի հիմնական գծերը:
12. Ինչպիսի՞ն էր նախահեղափոխական ռուսական կինոն:
13. Ի՞նչ կետերից էր բաղկացած ռուսական սիմվոլիզմի մանիֆեստը:
14. Ովքե՞ր էին ռուսական սիմվոլիզմի ամենավառ ներկայացուցիչները:
15. Ի՞նչ նպատակներ էին հետապնդում ռուս ակմեիստները: Նշել ամենախոշոր ակմեիստների անունները:
16. Ո՞վ էր իմաժինիզմի ամենախոշոր ներկայացուցիչը:
17. Որո՞նք էին ռուսական ֆուտուրիզմի երկու ուղղությունները:
18. Նշել ռուս էգո-ֆուտուրիստենին:
19. Նշել ռուս կուբո-ֆուտուրիստներին:
20. Ի՞նչ էին իրենցից ներկայացնում Ռուսական սեզոնները:
21. Երաժշտական արվեստը 20-րդ դարի սկզբին՝ Ի.

Ստրավինսկի:

22. Ի՞նչ դրսևորումներ ունեն ռուսական ավանգարդը:

### Ռուսական մշակույթը 1917թ.-ից մինչ մեր օրեր

1. Որո՞նք են խորհրդային մշակույթի հիմնական փուլերը:
2. Ի՞նչ խնդիրներ ու նպատակներ էին հետապնդում արվեստագետները հետհեղափոխական Ռուսաստանում:
3. Ո՞րն էր պրոպագանդիստական արվեստի դերը ԽՍՀՄ-ի մշակութային քաղաքականության մեջ:
4. Ինչպիսի՞ դրսևորում ունեն անհատի պաշտամունքը խորհրդային արվեստում և գրականության մեջ:
5. Ինչպիսի՞ ազդեցություն ունեցավ խռուշչովյան ձնհալը խորհրդային մշակույթի հետագա զարգացման վրա:
6. Ինչպիսի՞ դրսևորումներ ունեն այլախոհությունը խորհրդային մշակույթի տարբեր փուլերում:
7. Որո՞նք են արդի ռուսական մշակույթի խնդիրներն ու նվաճումները:

#### 4. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

##### Աղբյուրներ

Былины: В 25 т. — СПб.: Наука; М.: Классика, 2001.

Полное собрание русских летописей: В 43 томах – ПСРЛ: 1846-2004.

Слово о полку Игореве – М.: Коло, 2014.

##### Հիմնական

Агеносов В.В. История культуры России: Уч. Пособие. – М: Наука, 1993.

Балакина Т.И. История русской культуры, М: Наука, 1996.

Вишняков С.А. Культура России в историческом срезе. – М: Флинта, Наука, 2012.

Вишняков С.А. Культура России от Древней Руси до наших дней. – М: Флинта, Наука, 2006.



Есин А.Б. Введение в культурологию: Основные понятия культурологии в систематическом изложении: Уч. пособие для студентов вузов. – М.: Академия, 1999.

Культурология: Уч. пособие для студентов вузов / науч. Ред. Г.В. Драч. – Ростов-на Дону: Феникс, 1999.

Культурология: Уч: / составитель и ответств. редактор А.А. Радугин. – М.: Центр, 1998.

Оганов А.А., Хангельдиева И.Г. Теория культуры: Уч: пособие для вузов. – М: ФАИР-ПРЕСС, 2001. – 384 с.

Шендрик А.И. Теория культуры: Уч: пособие для вузов. – М: ЮНИТИ-ДАНА, Единство, 2002.

## Ըրաղնղիչ

Аверинцев С.С. Золото в системе символов ранневизантийской культуры // Аверинцев С.С. Поэтика ранневизантийской литературы. СПб.: Азбука-классика, 2004, с. 404-425.

Бахтин М.М. Проблемы поэтики Достоевского, М., Художественная литература, 1972.

Бахтин М.М. Эпос и роман, СПб, Азбука, 2000.

Вагнер К.Г. Канон и стиль в древнерусском искусстве. М.: Искусство, 1987.

Диалог культур: Россия – Запад – Восток (Материалы Международной научно-практической конференции «Славянская культура: истоки, традиции, взаимодействие. XI Кирилло-Мефодиевские чтения» 18-19 мая 2010 года), Москва – Ярославль: РЕМДЕР, 2010.

Культурное наследие Древней Руси. Истоки, Становление, Традиции, М., 1976, с. 24-27.

Лихачев Д.С. Национальное самосознание Древней Руси, 2-я типография «Печатный Двор» им. А. М. Горького треста «Полиграфкнига» ОГИЗа при СНК РСФСР; Ленинград; 1945.

Лотман Ю. Беседы о русской культуре. Быт и традиции русского дворянства (VIII-начало XIX века), СПб, Искусство, 1994.

Панченко А.А. Русская культура в канун Петровских реформ, Л., Наука, 1984.

Панченко А.А. Смех в Древней Руси, Л., Наука, 1984.

Паперный В. Культура Два, М., Новое литературное обозрение, 1996.

Рыбаков Б.А. Рождение Руси, М.: АйФ Принт, 2004.

Рыбаков Б.А. Язычество древних славян, М.: Наука, 1980.

Успенский Б.А. Семиотика истории. Семиотика культуры, Т. 1, Школа: Языки русской культуры, 1996.

Успенский Б.А. Семиотика истории. Семиотика культуры, Т. 2, Школа: Языки русской культуры, 1996.

Фицпатрик Ш. Повседневный сталинизм, М., РОССПЭН, 2008.

Христианство и русская литература (сб. ст.), Санкт-Петербург: Наука, 1994.

Юрчак А.В. Это было навсегда, пока не кончилось. Последнее советское поколение, М., Новое литературное обозрение, 2014.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

«Մշակութաբանություն» մասնագիտացման  
բակալավրիատի

ԾՐԱԳԻՐ

ՌՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ  
ՀԻՆ ԴԱՐԵՐԻՑ ՄԻՆՉ ՄԵՐ ՕՐԵՐ

Կազմեց՝ արվ. թեկն.  
ասիստենտ Ս.Ա. Նալբանդյանը

Տպաքանակ՝ 150 օրինակ

Տպագրվել է՝ «Մեկնարկ» ՍՊԸ տպարանում  
Հասցե՝ Ք.Երևան Աբովյան 41, հեռ. 091-40-27-97